

**ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ  
ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻՂԻՎԻ ԴԵՊՔՈՒՄ**

Պատժի նշանակումն արդարադատության իրականացման ամենաբարդ և պատասխանատու փուլերից է: Այս ոլորտում առկա օրենսդրական կարգավորումները թույլ են տալիս պատկերացում կազմելու պատժի նշանակման բնագավառում պետության վարած քրեական քաղաքականության հիմնական ուղղությունների և որդեգրված գերակա նպատակների մասին:

ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է այն հիմնական կանոնները, որոնք դատարանը պարտավոր է հաշվի առնել յուրաքանչյուր գործով: Դրանք պատիժ նշանակելու հիմնարար սկզբունքներն են՝ ղեկավար դրույթներ, որոնցով դատարանն առաջնորդվում է պատիժ նշանակելու բարդ և պատասխանատու գործընթացում: Նշված սկզբունքներն ուրվագծում են դատարանի հայեցողության շրջանակները և կոչված են հնարավորինս բացատրելու պատիժ նշանակելիս կամայականությունների դրսևորման հնարավորությունը:

Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները բխում են քրեական օրենսդրության հիմնական սկզբունքներից և կոչված են ապահովելու պատժի՝

ա) օրինականությունը, բ) արդարությունը, գ) անհատականացումը, դ) մարդասիրությունը<sup>2</sup>:

Օրինականության սկզբունքն արտահայտվում է նրանում, որ պատիժը որոշվում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի շրջանակներում՝ հաշվի առնելով Ընհանուր մասի դրույթները: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 61-ի 1-ին մասով սահմանված վերոնշյալ դրույթը համադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 5 հոդվածով ամրագրված օրինականության սկզբունքի հետ՝ կարելի է արձանագրել, որ դատարանը պատիժ

<sup>1</sup> ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի. գ. դ. պրոֆեսոր Ա. Գաբուզյան:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, Եր., 2012, էջ 427:

կարող է նշանակել միայն այն արարաքնների համար, որոնք ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված են որպես հանցավոր և միայն այնպիսի պատժատեսակ ու պատժաչափ, որը նախատեսված է տվյալ հոդվածի սանկցիայով: Դատարանի կողմից նշված դրույթներն անտեսելն անթույլատրելի է և օրինականության սկզբունքի կոպիտ խախտում է, ինչը դատական ակտը բեկանելու հիմք է:

Միևնույն ժամանակ, նշված պահանջներից կարող են սահմանվել նաև բացառություններ: Այսպես՝ օրենքով հստակ նախատեսված դեպքերում և կարգով դատարանը կարող է հոդվածի սանկցիայով նախատեսվածից ավելի մեղմ կամ ավելի խիստ պատիժ նշանակել: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքում պատիժ նշանակելու ընդհանուր դրույթներից բացի նախատեսված են նաև հատուկ կանոններ, որոնց կիրառման հիմքերի առկայության դեպքում դատարանը կարող է նշանակել այնպիսի պատիժ, որն ավելի մեղմ է (ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 64 և 65) կամ ավելի խիստ է (ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 66, 67 և 67.1), քան նախատեսված է Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով:

Պատիժ նշանակելու հատուկ կանոնների գոյությունը չի կարելի համարել նահանջ օրինականության սկզբունքից. դա նշված սկզբունքի առանձնահատուկ դրսևորում է և հետապնդում է իրավաչափ նպատակ, մասնավորապես՝ թույլ է տալիս նշանակել արդարացի պատիժ՝ պայմանավորված օրենսդրի կողմից առանձին դեպքերում հանցագործության և հանցավորի անձի վտանգավորության աստիճանին ու բնույթին տրված գնահատականով և ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 48-ով նախատեսված պատժի նպատակների իրագործման անհրաժեշտությամբ: Այսպիսով, կարելի է արձանագրել է, որ պատժի նշանակման հատուկ կանոնները պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից բացառություն չեն և հարաբերակցվում են ինչպես «ամբողջ» և «մաս»՝ ապահովելով պատասխանատվության և պատժի առավելագույն անհատականացում:

Հանցագործությունների ռեցիդիվի պարագայում նույնպես նախատեսված են պատիժ նշանակելու հատուկ կանոններ (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1), որի անմիջական նպատակը քրեաիրավական ներգործության միջոցների խստացումն է: Ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս թեև դատարանը պարտավորվում է

կիրառել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից յուրաքանչյուրը, միևնույն ժամանակ պատժատեսակի և պատժաչափի ընտրության հարցում արվում են որոշ վերապահումներ: Մասնավորապես, ընտրվում է ամենախիստ պատժատեսակը՝ ազատազրկման ձևով, որի նվազագույն սահմանը՝ ռեցիդիվի տեսակով պայմանավորված (հասարակ, վտանգավոր և առանձնապես վտանգավոր), պարտադիր խստացվում է: Հետևաբար, օրինականության սկզբունքն այս դեպքում ձեռք է բերում որոշակի առանձնահատկություններ:

Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում խիստ պատիժ նշանակելու հիմքը նախկինում կատարված դիտավորյալ հանցանքի համար դատվածության առկայությունն է: Հարկ է նկատել, որ տեսաբանների շրջանում դատվածության և ռեցիդիվի ինստիտուտների գոյությունը միանշանակ չի ընդունվում: Որոշ հեղինակներ դրանք դիտում են որպես ամբողջատիրական ռեժիմի արդյունք, որը նպատակ է հետապնդում ահաբեկելու հասարակությանը ու նման անարդարացի, հակաիրավական և չհիմնավորված մեթոդներով հետ պահելու հանցագործություններից: Նրանց կարծիքով նախկինում կատարված հանցանքի համար դատվածության առկայությունը հաշվի առնելով նոր կատարված արարքի համար ակնհայտ խիստ պատիժ նշանակելը խախտում է քրեական իրավունքի այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են օրինականության, արդարության և կրկնակի դատապարտման անթույլատրելիության, մարդասիրության սկզբունքները: Պրոֆեսոր Վոլժենկինը գտնում է, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում նշանակվող պատժին «գումարվում» է նախկինում կատարված այն արարքի համար պատիժը, որն անձն արդեն լիովին կրել է և դրանով իսկ ամբողջությամբ «քավել» մեղքը, հետևաբար, նման դեպքերում անձը կրկնակի է պատասխանատվության ենթարկվում միևնույն հանցագործության համար<sup>1</sup>:

Վ. Յու. Զուբակինի կարծիքով քրեական պատասխանատվության ոլորտում ռեցիդիվի ինստիտուտի գոյությունն անհավասարության դրսևորում է: Հեղինակը համոզմունք է արտահայտել, որ նույ-

---

<sup>1</sup> St' u **Волженкин Б.**, Принцип справедливости и проблемы множественности преступлений по УК РФ // Законность, 1998, № 12, էջ 2-7:

նաբնույթ հանցանք կատարած անձանց նկատմամբ տարբեր պատիժներ նշանակելը՝ այն հիմքով, որ նրանցից մեկը դատվածություն ունի, օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի խախտում է: Մասնավորապես, նշված սկզբունքից բխում է, որ միննույն հանրային վտանգավորության բնույթ և աստիճան ունեցող հանցանքներ կատարելու համար անձինք ենթակա են հավասար պատասխանատվության, մինչդեռ ռեցիդիվի վերաբերյալ նորմերի կիրառումը հանգեցնում է անարդարացի խիստ պատիժների նշանակման<sup>1</sup>:

Վերոնշյալ դիրքորոշումների հետ դժվար է համաձայնել: Այսպես՝ ռեցիդիվի դեպքում թեպետ նշանակվող պատժի խստացումը պայմանավորվում է նախկինում կատարված հանցանքի համար դատվածության առկայության փաստով, այնուամենայնիվ այն որևէ կերպ չի ազդում արարքի որակման վրա, և անձը չի ենթարկվում կրկնակի քրեական պատասխանատվության միննույն հանցագործության համար: Առկա դատվածության քրեաիրավական հետևանքների տարածումը նոր հանցանքի համար պատասխանատվության ենթարկելիս, դուրս չի գալիս այն թույլատրելի քրեաիրավական միջոցառումների շրջանակներից, որն օրենսդիրն իրավունք ունի օգտագործել արդարացված նպատակներին հասնելու համար՝ ապահովելով քրեական պատասխանատվության և պատժի տարբերակումը, դրա ուղղիչ ազդեցության ուժեղացումը դատապարտյալի նկատմամբ, նոր հանցագործությունների կանխումը և հանցավոր ոտնձգություններից անձի, հասարակության և պետության պաշտպանությունը:

Մինչդեռ, ի տարբերություն հանցագործությունների ռեցիդիվի՝ նախկինում առկա կրկնակիության ինստիտուտն անմիջականորեն ազդում էր հանցագործության որակման վրա: Քրեական օրենսգրքի Հատուկ մասի բազմաթիվ հոդվածներում կրկնակիությունը և դատվածությունը նախատեսված էին որպես ծանրացնող հանգամանք և ազդում էին արարքին տրվող քրեաիրավական գնահատականի վրա: Սակայն 2011 թվականի մայիսի 23-ին կատարված փոփոխությո-

---

<sup>1</sup> St' u **Зубакин В. Ю.**, Институт рецидива преступлений как нарушение принципа равенства перед законом в системе уголовной ответственности // Российский следователь, 2006, N 8, էջ 15-16:

յունների արդյունքում կրկնակիությունը՝ որպես բազմակիության տեսակ, վերացվեց, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչվեցին անձի՝ նախնիին դատվածության առկայությամբ պայմանավորված բոլոր ուրակյալ հանցակազմերը:

Մեր կարծիքով հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնների նախատեսումն ու քրեաիրավական ներգործության միջոցների խստացումն արդարացված է, չի հակասում օրինականության, կրկնակի դատապարտման անթույլատրելիության, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքներին և իրավաչափ նպատակ է հետապնդում: Մասնավորապես, այն պայմանավորված է ոչ թե նախնիին արարքի համար «հատուցման» անհրաժեշտությամբ (նախորդ հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկվելով և պատիժ կրելով՝ անձն արդեն լիովին «քավում» է իր մեղքը), այլ հանցավորի անձի և կրկնվող հանցավոր վարքագծի վտանգավորության աստիճանին և բնույթին օրենսդրի կողմից տրված օբյեկտիվ գնահատականով:

Ռեցիդիվային հանցավորության դեպքում քրեաիրավական ներգործության միջոցների խստացումը պայմանավորված է հանցագործության և հանցավորի անձի բարձր հանրային վտանգավորությամբ: Կրկնվող հանցավոր վարքագիծը նպաստում է անձի մասնագիտացմանը, անհրաժեշտ հանցավոր տեխնիկայի յուրացմանը և հետագայում հանցավոր գործունեությունն ավելի դյուրին և արդյունավետ շարունակելուն, ինչն անկասկած բարձրացնում է յուրաքանչյուր հաջորդ հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը: Միևնույն ժամանակ ռեցիդիվը վկայում է անձի կայուն հակահասարակական կողմնորոշումների, հանցավոր վարքագծում նրա հմտացման և արհեստավարժության մասին, ցույց է տալիս, որ պետության անունից կայացված դատավճիռը և դրանով նրա վարքագծին տրված բացասական գնահատականը բավարար արդյունավետություն չեն ունեցել, չեն ազդել հանցավորի վրա, ինչն էլ նրա նկատմամբ խիստ պատիժ նշանակելու հիմք է:

Բացի այդ, հանցագործությունների ռեցիդիվը բավականին տարածված երևույթ է, որին հաճախ առնչվում է իրավակիրառ պրակտիկան: Ռեցիդիվային հանցագործությունների ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է «առաջատար դիրքերից» մեկն Անկախ պետությունների համագործակցության անդամ երկր-

ների շարքում: Միջին հաշվով ռեցիդիվային հանցավորության մակարդակը կազմում է ընդհանուր հանցագործությունների քառորդ մասը՝ զիջելով միայն Բելոռուսի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության համանման ցուցանիշները<sup>1</sup>: Նշված նկատառումներից նույնպես բխում է ռեցիդիվային հանցավորության դեպքում խիստ պատիժների նախատեսման անհրաժեշտությունը:

Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները նույնպես առանձնահատուկ դրսևորում են ստանում: ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 10-ի և 61-ի իմաստով՝ պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցագործության հանրային վտանգավորության բնույթին և աստիճանին, հանցավորի անձը բնութագրող տվյալներին, ինչպես նաև պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին: Ռեցիդիվի պարագայում արդարացի և անհատական պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է թվարկվածներից բացի մանրամասն վերլուծել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 1-ին մասով նախատեսված հանգամանքները՝ կատարված հանցանքների քանակը, բնույթը և վտանգավորությունը, այն հանգամանքները, որոնց ուժով նախկին պատիժն արդյունավետ չի եղել հանցավորի ուղղման տեսանկյունից, ինչպես նաև նոր հանցագործության բնույթն ու վտանգավորության աստիճանը: Քանի որ հանցագործությունների ռեցիդիվը բնորոշվում է որպես դիտավորությամբ հանցանքի կատարում այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար, ապա դատարանը պատիժ նշանակելիս պարտավոր է պարզաբանել ինչպես նախկին դատապարտման, այնպես էլ նոր հանցագործության հետ կապված բոլոր հանգամանքները:

Ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս մեծ կարևորություն է ներկայացնում նաև հանցավորի անձը բնութագրող տվյալների համակողմանի վերլուծությունը: Թեպետ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 1-ին մասում նման պահանջ չի նախատեսվում, սակայն

---

<sup>1</sup> Տե՛ս հանցավորության վիճակն ԱՊՀ անդամ-պետությունների տարածքում 2004-2010 թվականներին: /Վիճակագրական ժողովածու, ՌԴ ՆԳՆ/, 2011, թերթ 15-16:

այն ուղղակիորեն բխում է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 61-ի 2-րդ մասից: Այսպես՝ պատիժ նշանակելիս դատարանը պետք է մանրամասն ուսումնասիրի նախորդ պատիժը կրելու ընթացքում հանցավորի վարքագիծը, նրա վերաբերմունքը պատժի նկատմամբ, ինչպես նաև պատիժը կրելուց հետո նրա կենսագործունեությունը, ընտանեկան պայմանները, աշխատանքի ատկայությունը, նոր հանցագործության շարժառիթները, նպատակները և այլ տվյալներ: Կարծում ենք՝ արդարացված կլինի ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի 1-ին մասում հատուկ ամրագրել հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու պահանջ, ինչը մնացած հանգամանքների հետ միասին թույլ կտար վեր հանելու նախկին պատիժը կրելու ընթացքում թույլ տրված սխալները, բացթողումները և նշանակելու անհատական պատիժ, որը կապահովի պատժի նպատակների իրագործումը՝ հանցավորի ուղղման և հանցագործությունների կանխարգելման տեսանկյունից:

Ինչ վերաբերում է մարդասիրության սկզբունքին, ապա հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս այն նախ և առաջ պետք է դիտարկել մարդու և հասարակության շահերի պաշտպանության տեսանկյունից: Կարծում ենք՝ չի կարելի համաձայնել այն տեսակետի հետ, որ ռեցիդիվի դեպքում խախտվում է մարդասիրության սկզբունքը: Նշված սկզբունքը նախ և առաջ ենթադրում է մարդասիրական վերաբերմունք մարդու և քաղաքացու այնուհետև՝ հանցանք կատարած անձանց նկատմամբ:

Այսպես՝ ռեցիդիվի դեպքում քրեաիրավական ներգործության միջոցների խստացումը նպատակ է հետապնդում ապահովելու քրեական օրենսգրքի խնդիրների իրացումը, մասնավորապես՝ հանցավոր ոտնձգություններից մարդու և հասարակության հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Բացի այդ, պետք չէ նաև մոռանալ հանցագործությունից տուժած անձանց նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի մասին՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր կանկրետ դեպքում հանցավորի և տուժողի շահերն անխզելիորեն փոխկապված են, և պատասխանատվության չափը միևնույն ժամանակ մարդասիրության չափ է տուժողի նկատմամբ:

Ընդհակառակը, արդարության և մարդասիրության սկզբունքները կխախտվեին այն պարագայում, երբ առաջին անգամ հանցանք

կատարած և կրկնակի հանցավոր վարքագիծ դրսևորած անձանց նկատմամբ ցուցաբերվեր միատեսակ մոտեցում և հավասար պատասխանատվություն սահմանվեր: Պատիժն արդարացի է, եթե համաչափ է հանցագործության վտանգավորությանն ու հանցավորի անձին, մինչդեռ ռեցիդիվային հանցավորությունն ունի հանրային վտանգավորության բարձր աստիճան և պահանջում է տարբերակված մոտեցում դրսևորելու անհրաժեշտություն:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 61-ում ամրագրված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներն առանձնահատուկ դրսևորում են ստանում հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս: Մասնավորապես, դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 67.1-ի կանոններով, պատիժ է նշանակում ոչ թե քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված շրջանակներում, այլ այն շրջանակներում, ինչը ստացվում է նշված կանոնի կիրառման արդյունքում՝ պատժի նվազագույն չափի պարտադիր խստացմամբ: Բացի այդ, պատիժ նշանակելիս դատարանը, հանցագործության հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը, անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները գնահատելուց զատ, վերլուծության է ենթարկում նախկին հանցանքների քանակը, բնույթը և հանգամանքները, որոնց ուժով կրած պատիժն արդյունավետ չի եղել, ինչպես նաև նոր հանցագործության վտանգավորության բնույթն ու աստիճանը: Միայն նշված հանգամանքների ամբողջական և համակողմանի վերլուծության արդյունքում է հնարավոր նշանակել անհատական և արդարացի պատիժ, որը համաչափ է կատարված արարքի բնույթին և վտանգավորությանը, ինչպես նաև հանցավորի անձին:



*Женя Степанян*  
*Аспирант кафедры уголовного права ЕГУ*

## ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ ОБЩИХ ПРИНЦИПОВ НАЗНАЧЕНИЯ НАКАЗАНИЯ ПРИ РЕЦИДИВЕ ПРЕСТУПЛЕНИЙ

В статье проанализированы проблемы применения общих принципов назначения наказания при рецидиве преступлений. В частности, рассмотрены особенности проявления принципов законности, справедливости и гуманизма в случае назначения наказания при рецидиве преступлений. На этой основе предпринята попытка выявить существующие пробелы и несоответствия, а также предложить эффективные способы их преодоления, направленные на совершенствование процесса назначения наказания в будущем.

*Zhenya Stepanyan*  
*PHD Student of the YSU Chair of Criminal Law*

## PECULARITIES OF THE APPLICATION OF GENERAL PRINCIPLES OF SENTENCING OVER RECIDIVISM

The article analyzes the problems of the application of the general principles of sentencing over recidivism. In particular, features of the basic principles of legality, fairness and humanity when sentencing over recidivism were analyzed, the existing gaps and contradictions of the legislation were revealed and effective ways of overcoming them aimed to improve the process of sentencing in the future were purposed.

**Բանալի բառեր՝** Պատժի նշանակում, արդարություն, մարդասիրություն, օրինականություն, հանցագործություն, հանցավորի անձ, դատվածություն, պատասխանատվություն:

**Ключевые слова:** назначение наказания, справедливость, гуманизм, законность, преступление, личность преступника, судимость, ответственность.

**Key words:** Sentencing, fairness, humanity, legality, crime, identity of the offender, criminal record, responsibility.